ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<28>> Մարտի 2018թ. N 57

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N64 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, <<Տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N762 որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային կանոնավոր երթուղիների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի 2018 թվականի մարտի 22-ի թիվ 1 արձանագրությունը և <<Ճամփորդ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2018 թվականի մարտի 13-ի N110/3955-18 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի մարտի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների սպասարկումը մրցույթի արդյունքներով կազմակերպությանը հատկացնելու մասին>> N64 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետում <<4 (չորս) տարի ժամկետով>> բառերը փոխարինել <<անորոշ ժամկետով՝ մինչև սահմանված կարգով նոր մրցույթի կայացումը:>> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*